ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ19 -Ն

11 ապրիլի 2018թվական գյուղ Նոր Կյանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի և «Տեղական ինքնակառավարման մասին »Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի 2018 թվականի բյուջեի հաստատման մասին » թիվ 29-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները .

1.Հայատանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի 2018թվականի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ) տողի և ծախսերի տնտեսագիտական դասակարգման (պահուստային միջոցներ) 4891 հոդվածի << 4703400>>(չորս միլիոն յոթ հարյուր երեք հազար չորս հարյուր) թիվը և բառերը փոխարինել << 4464100>>(չորս միլիոն չորս հարյուր վաթսունչորս հազար մեկ հարյուր)թվով և բառերով:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի 2018թվականի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 06, խումբ 04 դաս 01(փողոցների լուսավորում) և ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4251հոդվածի <<1120000 >> (մեկ միլիոն մեկ հարյուր քսան հազար) թիվը և բառերը փոխարինել <<1284000>> (մեկ միլիոն երկու հարյուր ութսունչորս հազար) թվով և բառերով:
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի 2018թվականի բյուջեի բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժին 01, խումբ 03, դաս 03 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) և ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4241 հոդվածի << 150000>> (մեկ հարյուր հիսուն հազար) թիվը և բառերը փոխարինել <<325300 >>(երեք հարյուր քսանհինգ հազար երեք հարյուր) թվով և բառերով:
4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքի 2018թվականի բյուջեի եկամտային մասի բաժին 09, խումբ 01,դաս 00 (գույքահարկ անհատ ձեռնարկատերերից)-ի

<< 2525600>> (երկու միլիոն հինգ հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր) թիվը և բառերը փոխարինել <<2625600>>(երկու միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր) թվով և բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 4	դեմ ՝0	ձեռնպահ՝ 0
ՅՈՒՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ՝ կողմ	----------	----------	----------
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝ կողմ	----------	----------	----------
ԺՈՐԱ ԹՈՐՈՍՅԱՆ՝ կողմ	----------	----------	----------
ՔՐԻՍՏԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ՝ կողմ	----------	----------	----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

11 ապրիլի 2018թվական

գյուղ Նոր Կյանք